

National Institute of Transplantation–ը անվերապահորէն դրամական
օգնություն է ստացել «Lincy» Կազմակերպության կողմից:





Կյանք Տալու Ուղղությունը

Եթե Դուք մտածում եք Ձեր երիկամներից մեկը Ձեր հարազատին նվիրաբերելու մասին, այս գրքույկում գետեղված տեղեկությունը Ձեզ համար օգտակար կլինի: Այն կարդալուց հետո, եթե Դուք դեռ տատանվեք կենդանի նվիրատու դառնալու հարցում, խոսեք Ձեր հարազատին խնամող փոխապատվաստման խմբի անդամներից որևէ մեկի հետ: Զրուցեք նրանց հետ այն ամենի մասին ինչը Ձեզ անհանգստացնում է և պատասխան ստացեք Ձեր հարցերին:

Ամիրապուների Քճբերը

Երիկամի առաջին հաջող փոխապատվաստումը կատարվել է 1950-ականների կեսերին՝ միաձվածին երկվորյակ եղբայրների միջև: Այդ ժամանակվանից ի վեր իրենց երիկամը նվիրաբերելու ցանկություն հայտնողների թիվն աճել է և ներկայումս ընդգրկում է ոչ միայն մերձավոր հարազատներին, այլ նաև հեռավոր ազգականներին, բարեկամներին և երբեմն նույնիսկ միանգամայն օտար մարդկանց:

Կենդանի ազգական նվիրատուն այն անձն է, որն արյունակցական կապ ունի հիվանդի հետ, օրինակ՝ նրա հայրը, մայրը, եղբայրը, քույրը, երեխան, հորաքույրը, մորաքույրը, հորեղբայրը կամ մորեղբայրը: Ազգակցական կապ չունեցող նվիրատուն կարող է լինել կինը կամ ամուսինը, նրանց ազգականները, որևէ մոտ բարեկամ կամ պարզապես միանգամայն կողմնակի մարդ:

Կարևոր է իմանալը, որ երիկամի փոխապատվաստումը միշտ ավելի բարեհաջող է ընթացել կենդանի նվիրատուի դեպքում, քան մահացածից վերցված երիկամի դեպքում, այսինքն՝ այն անձանցից, որոնց մոտ ուղեղի մահ է գրանցվել:

Կենդանի Ամիրապուի առավելությունները

Կենդանի նվիրատուից երիկամ ստանալը հիվանդի համար մի շարք առավելություններ ունի: Դրանք հետևյալն են.

- Հիվանդն ավելի քիչ է սպասում: Նա երիկամը ստանում է համեմատաբար ավելի բարվոք առողջական վիճակում գտնված ժամանակ և ստիպված չի լինում մեկից հինգ տարի սպասել, որը մեր երկրում մահացած նվիրատուից վերցված երիկամի համար սպասելու միջին տևողությունն է:
- Վիրահատությունը կատարվում է հիվանդի ուզած ժամանակ, այլ ոչ հրատապ կերպով, որը հաճախ պահանջվում է այն դեպքում, երբ սպասում են մահացած

նվիրատուից վերցված երիկամի պատվաստման: Հետևաբար՝ հիվանդը բժշկական առումով ավելի լավ է նախապատրաստություն է անցնում՝ նախքան փոխպատվաստումը:

• Կենդանի նվիրատուից վերցված երիկամը սովորաբար ավելի լավ է գործում:

Համաձայնագրի նախապայմանները

Երիկամի յուրաքանչյուր հավանական նվիրատու պետք է ամբողջական բժշկական ստուգում անցնի: Ստուգման առաջին մասը բաղկացած է արյան հետազոտություններից՝ պարզելու համար Ձեր և հիվանդի արյունների համատեղելիությունը: Այդ հետազոտություններն են՝ արյան խմբի որոշումը (A, B, AB կամ O) և մարդու արյան սպիտակ գնդիկների նկատմամբ հակաժինների (HLA) խմբի որոշումը, որը թույլ է տալիս պարզել, թե արդյո՞վեց կարևոր հակաժինների մեծ մասը, եթե ոչ բոլորը, նույնական են Ձեր և հիվանդի մոտ: (Հակաժինները երիկամների բջիջների մակերեսին գտնվող սպիտակուցներ են):

Եթե որոշվի, որ Դուք կարող եք երիկամի նվիրատու դառնալ, ամբողջությամբ կուսումնասիրվի Ձեր առողջական վիճակի պատմությունը և ֆիզիկական քննություն կկատարվի, համոզվելու համար, որ Դուք առողջ եք և կարող եք երիկամի նվիրատու դառնալ: Այդ քննությունն ընդգրկում է երիկամի հետազոտությունը և ռենտգենյան նկարահանումը:

Երիկամ նվիրաբերելու համար հարկավոր է շատ լավ առողջություն ունենալ: Դուք չպետք է շաքարախտ, արյան բարձր ճնշում, երիկամային քարեր կամ քաղցկեղ ունենաք: Երկու երիկամներն էլ պետք է ինչպես հարկն է գործեն, և Դուք չտպեք է ավելորդ քաշ ունենաք:

Հավանաբար ամենակարևորն այն է, որ Դուք ինքներդ համոզված լինեք, որ ցանկանում եք գոհաբերել Ձեր երիկամը: Երբեմն արժե՝ նախքան որոշում կայացնելը, Ձեր զգացմունքների և անհանգստությունների մասին խոսել Ձեր հոգևոր առաջնորդի, քահանայի, ռաբբիի կամ որևէ այլ խորհրդատուի հետ, որին Դուք վստահում եք:

Եթե Դուք որոշեք սկսել գործողությունը, և Ձեր առողջությունը թույլ տա դա անել, ապա նախքան փոխպատվաստումը Դուք պետք է մագնիսառեզոնանսային անոթագրություն (MRA) անցնեք: Ռենտգենյան նկարահանման այս առավել առաջնակարգ եղանակը

բժշկին ցույց կտա Ձեր երիկամների շուրջը գտնվող երակների և գարկերակների դասավորությունը և վիճակը:

Երիկամի հետազոտում (Ենթերկերոմիախի) վիրահատության եմերը

Երիկամը հեռացնելու երեք եղանակ կա՝

- 1) բաց դոնորական ենթերկերոմիա, որն ամենատարածվածն է,
- 2) նվազագույն միջամտությամբ դոնորական ենթերկերոմիա և 3) լապարոսկոպիական դոնորական ենթերկերոմիա: Երկրորդ և երրորդ եղանակները համեմատաբար նոր են, և բոլոր վիրաբույժները չեն, որ կատարում են նման վիրահատություններ:

Բաց դոնորական ենթերկերոմիայի ժամանակ ութից ինը դույն (20-23 սմ) երկարության բացվածք է կատարվում տասներկուերորդ կողոսկրի միջով կամ անմիջապես դրա ներքևում: Սովորաբար կողոսկրի մի մասը հեռացվում է: Այս գործողությունը շատ անվտանգ է, և հեռացվելուց հետո երիկամը շատ լավ վիճակում է լինում: Վիրահատությունից հետո Դուք մոտ չորս-հինգ օր կմնաք հիվանդանոցում, իսկ վերականգնման ժամանակաշրջանը կտևի վեցից ութ շաբաթ, որը նշանակում է, որ վերականգնման ժամանակաշրջանում Դուք չեք կարող վերադառնալ Ձեր աշխատանքին: Ձեր մարմնի վրա երկար սպի կմնա, որը ժամանակի ընթացքում կանհետանա:

Նվազագույն միջամտությամբ դոնորական ենթերկերոմիայի դեպքում սպիի երկարությունն ընդամենը երեքից-չորս դույն (7,5-10 սմ) է լինում: Այս վիրահատության ժամանակ մկանները բաժանվում են, սակայն կողոսկրի ոչ մի հատված չի հեռացվում: Այս վիրահատությունը մոտ կես ժամով ավելի երկար է տևում, քան բաց դոնորական ենթերկերոմիան, և երիկամին ոչ մի վնաս չի հասցվում: Վերականգնման ժամանակաշրջանն ավելի կարճ է, քան բաց դոնորական ենթերկերոմիայի դեպքում:

Լապարոսկոպիական դոնորական ենթերկերոմիայից հետո 7,5-10 սմ սպի է մնում գոտկատեղից ներքև և երեք փոքր անցք, որոնք շուտով վերանում են: Սովորաբար մկանները չի կտրվում, որը նշանակում է, որ վիրահատության հաջորդ օրն իսկ Դուք Ձեզ բավականին լավ կզգաք: Հիվանդանոցում հարկավոր է միջինը մոտ երկու օր մնալ, և երկուսից երեք շաբաթ անց Դուք լիովին աշխատունակ կլինեք:

Եթե Դուք չափազանց գեր կամ շատ նիհար եք, բազմիցս որովայնի վիրահատությունների եք ենթարկվել, կամ եթե Ձեր երիկամը շրջապատված է անբնականոն արյունատար անոթներով, ապա հնարավոր է, լապարոսկոպիական դոնորական նեֆրեկտոմիան Ձեզ համար անհմարին լինի:

Լապարոսկոպիական դոնորական նեֆրեկտոմիայի առավելությունները

- Արյան կորուստն ավելի քիչ է:
- Վիրահատությունից հետո ցավերն ավելի քիչ են:
- Հիվանդանոցում ավելի կարճ է հարկավոր մնալ:
- Վերականգնման ժամանակաշրջանն ավելի կարճ է: Երկուսից երեք շաբաթվա ընթացքում ամբողջովին վերականգնվում է Ձեր աշխատունակությունը:
- Փոքր սպին ավելի քիչ է տեսանելի:

Լապարոսկոպիական դոնորական նեֆրեկտոմիայի թերությունները

- Վիրահատությունն ավելի երկար է տևում և ավելի բարդ է:
- Բարդությունների հավանականությունն ավելի մեծ է:
- Հեռացվելուց հետո երիկամը կարող է այնքան լավ վիճակում չգտնվել, որքան բաց դոնորական նեֆրեկտոմիայի դեպքում:
- Եթե վիրահատության ժամանակ անկանխատեսելի բարդության առաջանա, հնարա վոր է, որ վիրաբույժներն ի վիճակի չլինեն այդ ճանապարհով հեռացնել երիկամը, և կարող է պահանջվել բաց դոնորական վիրահատություն կատարել:
- Բոլորը չէ, որ կարող են լապարոսկոպիական դոնորական նեֆրեկտոմիայի ենթարկվել:

Ամիրաբուժության հետ կապված հնարավոր վրասնակները

Ընդհանուր առմամբ՝ երիկամի հեռացումն անվտանգ գործողություն է, սակայն այն կարող է որոշ վտանգներ պարունակել: Ամեն դեպքում՝ Դուք լուրջ վիրահատության եք ենթարկվում: Հնարավոր է, որ Դուք ալերգիա ունենաք անզգայացնող դեղամիջոցների նկատմամբ, վարակում տեղի ունենա, պնևմոթորաքս (թոքի կոլապս կամ ճմլում), կամ նույնիսկ

չնախատեսված բարդություններ, որի հետևանքով Դուք կարող եք ստիպված լինել սպասվածից ավելի երկար մնալ հիվանդանոցում:

Չնայած առողջ կյանք վարելու համար մեկ երիկամը բավական է, վիրահատությունից հետո նույնպես՝ միակ երիկամ ունենալը կարող է որոշակի վտանգների հետ կապված լինել: Դրանց թվում կարող են լինել, օրինակ՝ սպիտակուցների ներթափանցումը մեզի մեջ, արյան բարձր ճնշումը, երիկամների հիվանդությունը, ուռուցքի առաջացումը և անգամ այնպիսի հազվադեպ վտանգներ, ինչպես հրագեոմով, սուր առարկայով երիկամի վնասումը կամ նման որևէ այլ վերք միակ երիկամի վրա: Եղել են դեպքեր, երբ երիկամ նվիրաբերողի մոտ երիկամային անբավարարություն է առաջացել: Ուստի ամենակարևորն է պարզելը, թե արդյո՞ք երիկամ նվիրաբերողը հարմար թեկնածու է:

Ամիրաբուժություն կապարտելու որոշումը

Երիկամի նվիրատվությունը լուրջ որոշում է: Խոսեք փոխապատվաստման խմբի անդամների հետ հնարավոր վտանգների և Ձեզ անհանգստացնող բոլոր հարցերի մասին: Նրանց տեղյակ պահեք Ձեր ունեցած բոլոր առողջական խնդիրների մասին: Նախքան որոշում կայացնելը հավաքեք այն ամբողջ տեղեկությունը, որը Ձեր կարծիքով, անհրաժեշտ է Ձեզ:

Միացյալ Նահանգներում օրենքով արգելված է գումար ստանալ նվիրաբերված օրգանի համար: Դա պետք է իսկապես անշահախնդիր նվիրատվություն լինի: «Կյանք նվիրելը» կարող է դառնալ Ձեր կյանքի ամենահուշարժան և նվիրական իրադարձություններից մեկը: Ուրիշներն ապրել են այդ երջանկությունը, և մենք ուրախ կլինենք օգնել Ձեզ գրուցել նման մեկի հետ, որը զոհաբերել է իր երիկամը:

Երիկամի նվիրատվության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել՝

National Institute of Transplantation
S. Mark Taper Foundation Transplant Center
2200 West Third Street, Suite 100
Los Angeles, CA 90057
213.413.2779

www.transplantation.com

